ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՎԻԿՏՈՐՅԱ ՎԱՐԴԳԵՍԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԴԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МЕЛКОНЯН ВИКТОРИЯ ВАРДГЕСОВНА

РОЛЬ СОЦИАЛЬНЫХ МЕДИА В УСЛОВИЯХ ТРАНСФОРМАЦИИ ПОЛИТИЧЕСКИХ КОММУНИКАЦИЙ В РА

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.01 “Теория политической науки”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**:

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ալեքսանյան Աշոտ Սեյրանի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Աթանեսյան Արթուր Վլադիմերի**

քաղաքական գիտությունների թեկնածու,
ասիստենտ **Մելիքյան Սիրանուշ Սերոժի**

Առաջատար կազմակերպություն՝ **Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի փետրվարի 4-ին, ժամը 14:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի դեկտեմբերի 24-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете.**

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Алексанян Ашот Сейранович**

Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Артур Атанесян Владимирович**

кандидат политических наук, ассистент **Сирануш Меликян Серожовна**

Ведущая организация: **Ереванский государственный университет языков и социальных наук имени В. Я. Брюсова**

Защита состоится 4 февраля 2026г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" КВОН МОНКС РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.

Автореферат разослан 24 декабря 2025г.

Научный секретарь специализированного совета 056,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սոցիալական մեդիայի դերի ուսումնասիրությունը քաղաքական հաղորդակցության կայացման պայմաններում արդի և զարգացող գիտական միջառարկայական ճյուղ է: Արևմտյան (ամերիկյան և եվրոպական) քաղաքագիտական ուսումնասիրություններում այն ունի համեմատաբար կայուն զարգացման մակարդակ, ինչը թույլ է տալիս առաջադեմ փորձի ու գիտելիքների տեղայնացում կատարել հայրենական քաղաքագիտության մեջ: Ընդ որում, նմանօրինակ զարգացումը պայմանավորված է արևմտյան քաղաքագիտության, իրավագիտության, սոցիոլոգիայի, լրագրության և հոգեբանության դպրոցների միջոլորտային սերտ փոխգործակցության հետ:

Սոցիալական մեդիայի դերի, նշանակության և ազդեցությունների քաղաքագիտական վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հիմնախնդիրներով՝

- Այն տեղեկատվության և լրատվության առաջնային և պահանջված աղբյուր է,
- Այն մատչելի, հասանելի և արդյունավետ է կիրառության լայն լսարանների համար, ընդ որում, տարբեր տարիքակազմերի, սոցիալական շերտերի, կրթացենզի և զբաղվածության մարդկանց համար,
- Այն ընկած է այլընտրանքային հաղորդակցության, ընդ որում, քաղաքական հաղորդակցության կայացման հիմքում,
- Այն կատարում է քաղաքական գործիքակազմի գործառույթ և առօրյա կենսագործունեության հարթակ է պետական ինստիտուտների և գործիչների, քաղաքական կազմակերպությունների և գործիչների, ինչպես նաև քաղաքացիների համար,
- Այն գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժամանակակից քաղաքական ուսումնասիրությունների տեսանկյունից,
- Այն ժամանակակից տեղեկատվական հասարակությունների զարգացման գրավականներից է,
- Այն այլընտրանքային ժողովրդավարական մասնակցության շարժիչ ուժ է,
- Այն էլեկտրոնային պետական կառավարման առաջընթացի ու կայացման հիմքում է,
- Այն ժողովրդավարության ամրապնդման (համախմբման) և մարդու անքակտելի իրավունքների ու ազատությունների պաշտպանության քաղաքացիական բաղկացուցիչն է,
- Այն, ի թիվս բազմաթիվ հնարավորությունների և առավելությունների, կրում է տեսանելի և քողարկված մի շարք բացասական դրսևորումներ, որոնք ռիսկային են հասարակական-քաղաքական ցիվիլիզացիոն երկխոսության, ինչպես նաև հասարակական և ազգային անվտանգության տեսանկյունից:

Հայաստանում սոցիալական մեդիայի քաղաքագիտական համապարփակ ուսումնասիրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- Հայաստանում 2018թ. կայացած Թավշյա հեղափոխության հաջողության հիմքում ընկած է նաև սոցիալական մեդիայի մաս կազմող Ֆեյսբուք սոցիալական ցանցի մասշտաբային և թիրախային կիրառումը:
- Պետական համակարգի և առընթեր գերատեսչությունների աշխատանքներում սոցիալական մեդիա բաղկացուցիչը պարտադիր է:
- Ե՛վ իշխանամետ, և՛ ընդդիմադիր կուսակցություններն ու քաղաքական գործիչները պետական նշանակության տարբեր իրադարձությունների ժամանակ սոցիալական մեդիայի և դրան բնորոշ գործիքակազմն օգտագործում են քաղաքական օրակարգերի մշակման, հանրային տրամադրությունների վրա ազդեցության հաստատման, հասարակական տարբեր խմբերի մոբիլիզացիայի, պաշտոնական կոչ-հայտարարությունների իրականացման, ինչպես նաև քաղաքացիների հետ հետադարձ կապի հաստատման համար:
- Հայաստանը շարունակում է խոցելի մնալ և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքական ապատեղեկատվության տարածման համատեքստում: Մասնավորապես, սրա մասին են վկայում Լեռնային Ղարաբաղի 2020թ. պատերազմի և դրան հաջորդող բոլոր իրադարձությունները, որոնք ի ցույց էին դնում Ադրբեջանի (և ոչ միայն) կողմից տարածվող կեղծ տեղեկույթները, որոնք հիմք են դառնում կեղծ խոսույթների ստեղծման և ակտիվ տարածման համար: Վերջիններս ուղղված են հասարակությանը՝ ենթարկելով նրան «մեդիաշոկի» և «մեդիատեռորի»:
- Հայաստանում տեղական մեդիայի (և՛ նոր մեդիա, և՛ ավանդական մեդիա) զարգացման և արդիականացման ահրաժեշտությունը ի ցույց է դրվում ապատեղեկատվության չեզոքացման և թվային այլ տեսակի մարտահրավերներին ոչ լիարժեք, պակաս արդյունավետ և զգալի անժամանակ (դանդաղ) արձագանքման հատկանիշներով:
- Հայաստանում տեղեկատվական հասարակության կառուցման ճանապարհին և էլեկտրոնային կառավարման համակարգերի արդյունավետ ներդրման համատեքստում սոցիալական մեդիայում տարվող իրազեկման արշավները որոշիչ են:
- Հայաստանի կրթական համակարգում մեդիա և թվային գրագիտության առարկաների ներդրման օրակարգը զգալիորեն բխում է սոցիալական մեդիայի գրագետ և հասցեական շահագործումից՝ որպես տեղեկատվության և լրատվության հիմնական աղբյուր:
- Հայաստանում քաղաքական, սոցիալական և այլ բնույթի իրադարձությունների թվային մասնակցության և ակտիվության հետ զուգահեռ, առաջ է գալիս դրանց բնույթի և հասցեականության ուսումնասիրության և գիտավերլուծական մեկնաբանության անհրաժեշտություն:

Սոցիալական մեդիայի և քաղաքական հաղորդակցության փոխհարաբերությունների ուսումնասիրությունը քաղաքագիտության շրջանակներում նոր մոտեցում է և գիտական տեսանկյունից դեռևս թերի

ուսումնասիրված: Առկա տեղական ուսումնասիրությունները հիմնականում կրում են հետազոտական-վերլուծական բնույթ և հիմնված են լրատվական բովանդակության ու քանակական տվյալների վրա:

Ելնելով վերոնշյալից, այս աշխատանքում սոցիալական մեդիայի կրթական և սոցիալականացման գործառույթները, ազդեցությունը քաղաքական փոխակերպումների և քաղաքացիակենտրոն կառավարման վրա, այնպիսի վիրտուալ բացասական հիմնախնդիրներ, ինչպիսին են կիբեռանվտանգությունը և թվային խզումը, քաղաքական ապատեղեկատվությունը և ատելության խոսքը, զուգահեռաբար նաև՝ տեղեկատվական հասարակության և թվայնացման զարգացման գործընթացի կարևորության բարձրացումը, թվային մասնակցության նոր ձևերի և մասնակցային նոր վարքագծերի (միկրոակտիվիստ, սլակտիվիստ) վերհանումը և գնահատումը, թվային և մեդիա ուսուցման առաջնայնությունը այն ելակետային հիմնահարցերն են, որոնց մանրակրկիտ պարզաբանումը այլևս գիտական անհրաժեշտություն է, ինչը և թեմայի ուսումնասիրությունն արդիական և հրատապ է դարձնում:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Սոցիալական մեդիայի ուսումնասիրությունը քաղաքական հաղորդակցության կայացման համատեքստում քաղաքագիտական հետաքրքրություն առաջացնող և շարունակաբար հետազոտվող ոլորտ է: Հիմնախնդրի շուրջ առկա են տարբեր մոտեցումներ, և որ ամենաարժանահիշատակն է, խիստ հակասական մոտեցումներ: Գերակայող է մնում թերևս այն կարծիքը, որ դեռևս մշակված չէ որևէ միասնական մոտեցում և մեթոդաբանություն, որը ժամանակակից քաղաքագիտությանը թույլ կտա սպառիչ կերպով դիտարկել քաղաքական հաղորդակցության կայացման գործում սոցիալական մեդիայի դերն ու ազդեցությունը:

20-րդ դարի կեսերից մինչև վերջի քաղաքական հաղորդակցության տեսությունները կարելի է բաժանել երեք հիմնական գիտական մոդելների՝ տեղեկատվական հասարակության տեսություն, զանգվածային հաղորդակցության տեսություն և հետմոդեռնիստական հաղորդակցության տեսություն: Տեղեկատվական հասարակության տեսության առաջին մոդելում ի հայտ է գալիս նոր հետազոտական մեթոդաբանություն, որի կիրառման շրջանակը սոցիալական երևույթների վերլուծությունն է, իսկ առարկան՝ մարդկային գործունեությունը սոցիալական մեդիայի, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցության տակ: Երկրորդ մոդելը, որը կապված է զանգվածային հաղորդակցության տեսությունների հետ, շեշտը դնում է տեղեկատվության տարածման և մարդկային գործողությունների վրա՝ օգտագործելով ոչ միայն ավանդական հաղորդակցության միջոցները, այլև սոցիալական մեդիան: Երրորդ մոդելը՝ պոստմոդեռնիստական տեսությունները, ի տարբերություն նախկինում նշված երկուսի, համակարգված չեն որևէ կոնկրետ տեսության շրջանակներում: Պոստմոդեռնիստական տեսություններում սոցիալական մեդիան կենտրոնական տեղ է զբաղեցնում քաղաքական հաղորդակցման գործընթացներում՝ սահմանելով քաղաքացիական մշակույթի և քաղաքական գործունեության եղանակները:

Հիմնվելով վերոհիշյալ մոդելների վրա՝ ատենախոսության մեջ ուսումնասիրված է քաղաքական դերակատարների թվային հաղորդակցության ռազմավարությունները սոցիալական մեդիայի տիրույթի և դրա օգտատերերի հետ: Ցանցային հասարակության տեսությունների հետ կապված վերոհիշյալ պարադիգմաների շրջանակներում՝ հիմնվելով հիմնականում Պ. Նորիսի[1], Ջ. Լիս-Մարշմենտի[2], Բ. Աքսֆորդի[3], Ռ. Շմիդ-Բեքի[4] և ուրիշների մոտեցումների վրա, դիտարկված է, որ սոցիալական մեդիայի նորամուծությունը և գրավչությունը հեղափոխականորեն են ազդել հասարակական կյանքի ոլորտների և ենթակառուցվածքների, քաղաքական դերակատարների մշակույթի և վարքագծի վրա՝ վերջիններիս քաղաքացիական մասնակցությունը և քաղաքականության հանդեպ հետաքրքրվածությունը հասցնելով նոր մակարդակի: Համաձայն այս պոզիտիվիստական մոտեցման, սոցիալական մեդիայի բազմազան և կիրառելի գործիքակազմն առավել դյուրին է դարձնում մարդկանց միջև հաստատվող երկխոսությունը, ինչն էլ իր հերթին անխուսափելիորեն առաջացնում է հարցադրումներ, որոնց բավարարման համար ձևավորվում է նոր քաղաքական իրավիճակ՝ տանելով դեպի հաղորդակցային նոր քաղաքացիական մշակույթի ձևավորման:

Սոցիալական մեդիա մշակույթը, քաղաքագիտորեն ուսումնասիրելով որպես առանձին երևույթ, մենք կարող ենք բացահայտել այս ոլորտում հետազոտության հարակից ոլորտներ: Հետևաբար, սոցիալական մեդիա մշակույթի քաղաքագիտական հետազոտության շրջանակներում մենք դիմել ենք քաղաքական մշակույթի քննադատական ըմբռնմանը: Դրանց թվում են՝ Ա. Շարիկովի[5], Օ. Գորոշկոյի և Ն Բոյկոյի[6], Ե. Գաուֆմանի[7], Ֆ. Քեշիշյանի և Լ. Հարությունյանի[8],

[1]Norris, P. (2003). “Preaching to the Converted? Pluralism, Participation and Party Websites.” Party Politics 9 (1), pp. 21-45.

[2]Lees-Marshment, J. L. (2001). Political Marketing and British Political Parties: The Party's Just Begun. Manchester University Press, pp. 18-49.

[3]Axford, B., and R. Huggins (eds.). (2001). New Media and Politics., London: SAGE Publications.

[4]Schmitt-Beck, R., and C. Mackenrod (2010). “Social networks and mass media as mobilizers and demobilizers: A study of turnout at a German local election.” Electoral Studies 29 (3), pp. 392-404.

[5]Sharikov, A. (2023). Representation of the Post-Soviet Countries in the Global Online Information Space in 2020–2021: Frequency of Mention, Media Dynamics, Mood Characteristics. In: Davydov, S. (eds) Internet in the Post-Soviet Area. Societies and Political Orders in Transition. Springer, Cham, pp. 7-46. https://doi.org/10.1007/978-3-031-32507-6_2.

[6]Goroshko, O., Boiko, N. (2023). Uanet Through Socio-Political Perspectives. In: Davydov, S. (eds) Internet in the Post-Soviet Area. Societies and Political Orders in Transition. Springer, Cham, pp. 135–160. https://doi.org/10.1007/978-3-031-32507-6_7.

[7]Gaufman, E. (2021). Cybercrime and Punishment: Security, Information War, and the Future of Runet. In: Gritsenko, D., Wijermars, M., Kopotev, M. (eds) The Palgrave Handbook of Digital Russia Studies. Palgrave Macmillan, Cham, pp. 115–134. https://doi.org/10.1007/978-3-030-42855-6_7.

[8]Keshishian, F., and Harutyunyan, L. (2013). “Culture and Post-Soviet Transitions: A Pilot Study in the Republic of Armenian.” International Journal of Politics, Culture, and Society 26 (4), pp. 369-392.

ինչպես նաև Դ. Քելների[9] և Դ. Չալմերսի[10] աշխատանքները: Սոցիալական մեդիա մշակույթին վերաբերող նշանակալի աշխատություններ են ներկայացված նաև Ա. Աթանեսյանի, Ս. Մխիթարյանի և Ա. Կարապետյանի կողմից[11,12]:

Ի հակադրություն այս ամենի, Մ. Գլեյդվելը և Ջ. Ալտերմանը դիտարկում են սոցիալական մեդիայի սահմանափակ հնարավորությունները քաղաքական համակարգի և վարչակարգի փոխակերպումներում: Ուսումնասիրվող խնդիրը վերլուծելու և, առաջին հերթին, սոցիալական մեդիան վերլուծելու համար նրանք կենտրոնանում են այն մոտեցման վրա, որի համաձայն քաղաքական դերակատարները սոցիալական մեդիայի միջոցով անընդհատ փոխազդեցության մեջ լինելով այլ դերակատարների հետ, կորցնում են կապը տեղական համայնքների հետ, կորցնում են որոշակի կապ ավանդական ինստիտուտների հետ՝ դառնալով գլոբալ ցանցային կառուցվածքների մաս: Նրանց կարծիքով, անցումային հասարակության մեջ իրական փոփոխությունները պահանջում են հասարակության ակտիվ և ուղղակի մասնակցություն սոցիումի հիմնախնդիրների կարգավորմանը, իսկ մարդիկ շատ հաճախ բավարարվում են առցանց և թվային շփմամբ, որը վիրտուալ շղարշ է կամ հաղորդակցության իմիտացիա, սակայն ոչ իրական փոխգործակցություն:[13]

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել սոցիալական մեդիայի օգտատերերի հետ քաղաքական դերակատարների առցանց հաղորդակցման ռազմավարությունների դերն ու առանձնահատկությունները՝ հասարակությունում ցիվիլիարխիկ երկխոսությունն ու գործընկերությունն ապահովելու գործում: Հիմնվելով սոցիալական մեդիայի տեսահայեցակարգային մոտեցումների, ինչպես նաև մեզանում սոցիալական մեդիայի կիրառման առաջադեմ փորձի վրա՝ դիտարկված է հնարավոր ռիսկերի և մարտահրավերների իրավիճակային լուծումները քաղաքական գործընթացների թվայնացման պայմաններում:

Այս նպատակներով կատարվել է անդրադարձ հետևյալ խնդիրներին՝

- Ուսումնասիրել մեզանում թվային գործիքների և դրանց միջնորդությամբ քաղաքական հաղորդակցության իրականացման հնարավորություններն ու մարտահրավերները:
- Քննարկել քաղաքական հաղորդակցության տեսության մեջ առկա սոցիալական մեդիայի շուրջ քաղաքագիտական պարադիգմաները և

---

[9] Kellner, D. (2020). Media Culture: Cultural Studies, Identity, and Politics in the Contemporary Moment (2nd ed.). Routledge. https://doi.org/10.4324/9780429244230.

[10] Chalmers, D. (2022). Reality+: Virtual worlds and the problems of philosophy. New York: W. W. Norton & Company.

[11] Atanesyan, A. V., Mkhitaryan, S., and Karapetyan, A. (2025). ""Virtual Masks" and Online Identity: The Use of Fake Profiles in Armenian Social Media Communication." Journalism and Media 6 (2), 49. https://doi.org/10.3390/journalmedia6020049.

[12] Атанесян, А. В. (2019). "Влияние социальных сетей на протестное поведение (на примере Армении)." Социологические исследования, № 3., С. 73-84. https://doi.org/10.31857/S013216250004280-1.

[13] Alterman, J. B. (2011). "The Revolution Will Not Be Tweeted." The Washington Quarterly 34 (4), pp. 103-116. https://doi.org/10.1080/0163660X.2011.610714.

քաղաքական հարաբերություններում դրանց կիրառման և ազդեցության ընթացակարգերը:

- Բացահայտել սոցիալական մեդիայի դրական ու բացասական ազդեցությունները ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարական գործընթացներում:
- Ուսումնասիրել սոցիալական մեդիայում սկզբնավորվող, շրջանառվող, ինչպես նաև սոցիալական մեդիայի կողմից խրախուսվող վտանգավոր և ռիսկային բովանդակությունը, կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվությունը և դրանց հնարավոր ազդեցությունը քաղաքական մասնակցության և քաղաքական վարքաբանության վրա:
- Գնահատել մեզանում տեղեկատվական հասարակության զարգացման հեռանկարները՝ սոցիալական մեդիայի արդյունավետ և կառուցողական օգտագործման համար:

Աշխատանքի հիմնանպատակ է հանդիսանում դիտարկել սոցիալական մեդիան և քաղաքական հաղորդակցությունը տարբեր դիտանկյուններից՝ տալով նրանց փոխկապվածության և փոխլրացման սպառիչ հիմնավորումները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Այս հետազոտության օբյեկտը ՀՀ քաղաքական կյանքում սոցիալական մեդիայի առցանց քաղաքական հաղորդակցությունն է: Հետազոտության առարկան քաղաքական դերակատարների կողմից սոցիալական մեդիայի օգտատերերի հետ շփվելիս օգտագործվող քաղաքական առցանց հաղորդակցման ռազմավարություններն են:

Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքը: Տեսական առումով կատարված աշխատանքը կարելի է դիտարկել որպես հայրենական քաղաքագիտության մեջ նոր զարգացող միջոլորտային գիտական ճյուղի տեսական հարստացում, ինչը ամուր հիմք կծառայի հետագա ուսումնասիրությունների և գիտական հիմնավորումների համար:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմում են համեմատական, նկարագրողական և վերլուծության այնպիսի որակական մեթոդները, ինչպիսիք են փաստաթղթերի վերլուծությունը և քննադատական դիսկուրս վերլուծությունը:

Աշխատանքում լայնորեն օգտագործվել է բովանդակային (կոնտենտ) վերլուծության մեթոդը: Դրանց շրջանակում հիմնախնդրի տարբեր չափումների ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակների աշխատանքները ենթարկվել են համապարփակ ուսումնասիրության՝ գնահատելով դրանցում առկա մոտեցումների կիրառման եղանակները մեզանում: Պետք է նկատել, որ հիմնախնդրի վերաբերյալ հեղինակների մոտեցումներն աչքի են ընկնում միմյանց հակադրվող վերլուծություններով և հարցին տարբեր դիտանկյուններից անդրադառնալու փորձերով, ինչն առավել արժեքավոր և գիտականորեն հետաքրքիր է դարձնում աշխատանքը՝ տալով բազմաշերտ գնահատականների և եզրահանգումների մեծ հնարավորություն: Բացի հետազոտության երկրորդային մեթոդներից, աշխատանքում կիրառվել են նաև առաջնային հետազոտության մեթոդներ, ընդ որում՝ թե՛ քանակական, և թե՛ որակական դաշտային ուսումնասիրություններ:

Որակական հետազոտության շրջանակում իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումներ:

Տեղին է նշել, որ հետազոտության իրականացման ողջ ընթացքը զուգորդվել է համանուն թեմայի շուրջ մասնագիտական գործունեության իրականացմամբ, ինչը թույլ է տվել տեսական եզրահանգումները համապատասխանեցնել կիրառական-փորձառական աշխատանքով՝ ներգրավելով տարբեր թիրախային խմբերի (ուսանողներ, ուսուցիչներ, պետական և քաղաքական պաշտոնյաներ, քաղաքական ու քաղաքացիական ակտիվիստներ և այլք) և կառույցների (ՔՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ, քոլեջներ, ԲՈՒՀ-եր, պետական համակարգի ինստիտուտներ և այլն):

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի հիմնանորույթը կայանում է հայրենական քաղաքագիտության մեջ զարգացող նոր միջոլորտային ուղղության, այն է՝ սոցիալական մեդիայի և քաղաքական հաղորդակցության միջև առկա կապի և՛ տեսական, և՛ կիրառական ուսումնասիրության ու զարգացման մեջ՝ միջազգային գիտակարգի և փորձառության համեմատական ներկայացման միջոցով:

Աշխատանքի յուրաքանչյուր ենթագլուխ դիտարկում է արդի հիմնախնդիր, վերհանում համաշխարհային և տեղական խնդիրներ ու, ամենակարևորը, ներկայացնում է փաստահեն վերլուծություն և կատարում խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր քայլերի քարտեզագրում:

Մի կողմից հաշվի առնելով թեմայի արդիականությունը և հրատապությունը, մյուս կողմից՝ կատարված աշխատանքի տեսական ու կիրառական նշանակությունը, կարող ենք փաստել, որ աշխատանքը կարևոր է ոչ միայն գիտակրթական համալրման համատեքստում, այլև կարող է ծառայել գործնական ուղեցույց քաղաքականությունների մշակման և կյանքի կոչման ճանապարհին:

Զուգահեռաբար, լինելով միջառարկայական աշխատանք, այն կարող է նպաստ բերել հաղորդակցության և նորագույն թվային միջոցների նեղ ու լայն գիտական քննարկմանը սոցիոլոգիա, լրագրություն, հոգեբանություն, իրավագիտություն մասնագիտություններում ևս: Մասնավորապես, սոցիոլոգիայի շրջանակում աշխատանքը առաջարկում է անաչառ գիտական մեթոդի կիրառմամբ քանակական հարցումների պաշար, լրագրության շրջանակում աշխատանքը ներկայացնում է ժամանակակից պրոֆեսիոնալ լրագրության, հետախուզական-փաստահավաք լրագրության և թվային մեդիայի չափանիշների, հատկանիշների, հնարավորությունների և բարդությունների միջազգային ուսումնասիրություն: Իրավագիտության շրջանակում աշխատանքը շեշտադրում է մեդիա իրավունքի, սոցիալական մեդիայի կամ թվային ԶԼՄ-ների իրավական կարգավորումների տեղական ընթացակարգերը և միջազգային լավագույն փորձն ու ձախողումները:

Կարևոր է առանձնակի շեշտադրել, որ առաջին անգամ հայրենական քաղաքագիտության մեջ մեկ համալիր աշխատանքի ներքո գիտական մեկնաբանության է ենթարկվում թվային տիրույթում «քաղաքական ապատեղեկատվություն» և «քաղաքական ատելություն խոսք» եզրույթները՝ ցույց տալով վերջիններիս ակտիվ փոխլրացումը և արդյունքում նոր տեսակի քաղաքական

մարտահրավերների ի հայտ գալը՝ որպես քաղաքական արդյունավետ հաղորդակցության անհնարինությանը հանգեցնող խոչընդոտ: Փաստորեն, աշխատանքում կատարվում է գիտական եզրահանգում առ այն, որ քաղաքական ատելության դեմ պայքարը պետք է զուգորդվի քաղաքական ապատեղեկատվության չեզոքացման հետ և հակառակը:

Առաջին անգամ հայրենական քաղաքագիտության մեջ համապարփակ քննության է առնվում թվային մասնակցության, այն է՝ միկրոակտիվիզմի հայեցակարգը, որը դիտարկում է 2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում սոցիալական մեդիայի տիրույթում քաղաղաքական դերակատարների մասնակցության և նրանց առցանց հաղորդակցման ռազմավարությունները: Դրանք մեզ թույլ են տալիս ոչ միայն գնահատել սոցիալական մեդիա տիրույթում առցանց հաղորդակցության հետ կապված հնարավոր ռիսկային գործոնները, այլև առաջարկել կայունացնող գործոններ, որոնք ապահովում են ՀՀ քաղաքական համակարգի անխափան աշխատանքը:

Աշխատանքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

- Մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումների, մոտեցումների և հայեցակարգերի վերլուծության հիման վրա նոր սահմանումների առաջադրում:
- Քանակական հարցում 18-35 տարեկան երիտասարդների շրջանում Հայաստանի ողջ տարածքում և որակական հետազոտություն Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզերում և Երևանում՝ ֆոկուս խմբերի տեսքով: Հետազոտության շնորհիվ սույն աշխատանքում ներկայացված է Հայաստանում երիտասարդների շրջանում սոցիալական մեդիայի և սոցիալական լրատվական այլ հարթակների կողմից քաղաքական ապատեղեկատվության և ատելության խոսքի դրսևորումների հանդեպ վերաբերմունքը, վերջիններիս ազդեցությունը նրանց քաղաքական մասնակցային վարքագծի վրա:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը բխում է ինտեգրված մոտեցման կիրառումից, որը թույլ է տալիս ոչ միայն նկարագրել սոցիալական մեդիայում դրանց փոխակերպման փուլում մարմնավորված առկա քաղաքական հաղորդակցման մոդելները, այլև ինտեգրել դրանք միասնական համակարգի մեջ՝ ներառյալ ավանդական մեդիայի հետ առնչվող դրույթները: Սոցիալական մեդիայում քաղաքականապես նշանակալի տեղեկատվության ներկայացման հետ կապված հաղորդակցման ռազմավարության ուժեղ և թույլ կողմերի դասակարգումն ու բացահայտումն արժեքավոր է ինչպես ուսումնասիրվող երևույթի միասնական գիտական պատկեր ստանալու, այնպես էլ մեդիա մասնագետների գործնական աշխատանքի համար:

Կիրառական առումով, մի կողմից, աշխատանքում առկա մեծաքանակ ընթացիկ զարգացումներով պայմանավորված համաշխարհային և տեղական իրադարձությունների քննարկումը, մյուս կողմից, կիրառական հետազոտությունների և աշխատանքի կատարման ողջ ընթացքում տարբեր

լսարանների ու թիրախային խմբերի հետ տարված համանուն թեմաներով աշխատանքները, տալիս են բացառիկ հնարավորություն համադրել տեսությունը գործնականի հետ, միջազգային փորձը տեղականի հետ և բազմակողմ ու քննադատական դիտանկյունից նայել կատարված աշխատանքին ու հնարավոր վերջնարդյունքներին:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, առցանց լրատվամիջոցների, ինչպես նաև կայքերի և սոցիալական ցանցերի խմբագիրների կողմից՝ քաղաքական դերակատարների և գործիչների առցանց գործունեությունը լուսաբանելիս՝ մեզանում առցանց բովանդակության սպառողների շրջանում հասարակական տրամադրությունների ձևավորման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Ներկայացված հետազոտության արդյունքները գործնական նշանակություն ունեն՝ լրագրության, սոցիոլոգիայի, հոգեբանության, քաղաքագիտության և իրավագիտության ոլորտներում: Դրանք կարող են ուղեցույց հանդիսանալ ուսանողների, ոլորտային հետաքրքրություն ունեցող հետազոտողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքական գործիչների և հանրային ծառայողների համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են գրախոսվող պարբերական գիտական հրատարակություններում հրապարակված հեղինակային գիտական թվով վեց հոդվածներում: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնում, ինչպես նաև ներկայացվել են մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների ու կրթական ծրագրերի շրջանակում: 2021 թվականին Յենային ֆրիդրիխ Շիլլերի անվան համալսարանի հաղորդակցային գիտությունների ինստիտուտում, գիտահետազոտական ծրագրի շրջանակում, տեսական ուսումնասիրության է ենթարկվել թվային մասնակցության (միկրոակտիվիզմի) հիմնախնդիրը, որը առանձին ենթագլխով ներկայացված է ատենախոսության մեջ: 2017-2019 թվականներին Գերմանիայի Ֆրանկֆուրտի Գյոթեյի անվան համալսարանի սոցիալական գիտություններ ֆակուլտետում իրականացվել է անկախ դոկտորական հետազոտական աշխատանք, որը նվիրված է եղել նոր մեդիայի և երիտասարդների վրա դրա գործիքակազմի վարքաբանական ազդեցությունների քննարկմանը: Աշխատանքի հիմնարար գաղափարները ներկայացվել են նաև 2019 թվականին ԵՊՀ-ում կայացած քաղաքագետ Է. Զոհրաբյանի ծննդյան 80 ամյակին նվիրված «Միջազգային հարաբերությունների ժամանակակից մարտահրավերները» խորագրով գիտաժողովում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացության ու առաջարկությունների հատվածից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածից: Ատենախոսության համար բովանդակային աղբյուրներ են հանդիսացել 135 գիտական հոդվածներ և աշխատություններ, 11 օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, 77 էլեկտրոնային աղբյուրներ և կայքեր:

Ատենախոսության տեքստային ծավալը 151 էջ է: Հավելվածը ներառում է ատենախոսության համար մշակված 3 հեղինակային պատկերներ և վիճակագրական վերլուծություն՝ դիագրամներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունը հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում է հետազոտության նպատակն ու խնդիրները, թեմայի գիտական մշակվածությունը, առարկան ու օբյեկտը, հետազոտության տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, ինչպես նաև գիտատեսական ու կիրառական նշանակությունը: Ատենախոսության ուսումնասիրությունները ներկայացվում են երեք գլուխներով:

Առաջին գլուխը՝ **«Սոցիալական մեդիայի տեսական և գործառնական հիմքերը»**, կազմված է երեք ենթագլուխներից և նվիրված է եզրույթների շուրջ տեսական և փորձագիտական հիմքերի քննարկմանը և դրանց ուղղակի ու անուղղակի փոխգործակցության վերհանմանը: Համապարփակ ներկայացվում է սոցիալական մեդիայի գործիքակազմի կիրառումը քաղաքական նպատակներով և սոցիալական մեդիայի ներուժը քաղաքական մոբիլիզացիայի համատեքստում:

Առաջին՝ **««Սոցիալական մեդիա» և «քաղաքական հաղորդակցություն» հասկացությունների փոխհարաբերությունը»** ենթագլխում ներկայացվում է կոմունիկատիվ հասարակություններում «տեղեկատվության» դերն ու նշանակությունը սոցիալական մեդիա և քաղաքական հաղորդակցություն կապի հաստատման գործում՝ որպես առաջնային հաղորդակցային միավոր: Քննության է առնվում «առցանց լրատվություն» կոնցեպտը, առցանց տիրույթում լրատվամիջոցների գործունեությունը և առանձնահատկությունները և քաղաքական լրատվության կարևորությունը հասարակության կողմից պետական համակարգի ընկալման, պետական և քաղաքական գործիչների գործունեության գնահատման և քաղաքական մասնակցության ցուցաբերման համար: Համապարփակ անդրադարձ է կատարվում հաղորդակցության տեսահայեցակարգային քննարկմանը և այն հակասություններին, որոնք կարող են ի հայտ գալ դրա վարման գործում թվային ուղիների օգտագործման և արդի թվային գործիքակազմի կիրառման դեպքում: Ենթագլուխը հնարավորություն է տալիս գալ եզրահանգման, որ սոցիալական մեդիան կատարելով հաղորդակցային թունելների գործունեություն կարող է կանխորոշել հասարակություն-պետություն երկխոսությունը և ազդել ներհասարակական շփման վրա՝ այդ կերպ ազդելով մասնակցային ժողովրդավարության, ժողովրդավարական արժեքների ու ինստիտուտների ամրապնդման վրա:

Երկրորդ՝ **«Սոցիալական մեդիան քաղաքական համախմբման գործիքակազմում»** ենթագլխում ներկայացվել են համացանցի քաղաքական գործառույթները և քաղաքական գործընթացների վրա ազդեցության հիմնական ոլորտները: Ենթագլխում քննարկվել են թվային տիրույթում «դիրքորոշում» հասկացության քաղաքագիտական ասպեկտները՝ որպես քաղաքական

հաղորդակցության վարման հատուկ տեխնոլոգիա: Տրվել են «ցանցային քաղաքական գործչի» մոդելի բնութագիրը և ցանցային առաջնորդի հեղինակության կերտման հիմնական նախադրյալները: Այս ուղղություններով վերլուծությունները մեզ հանգեցրին այն պնդմանը, որ քաղաքական գործընթացները թվային տիրույթում ոչ միայն ինքնաբուխ են, այլև՝ վերահսկվող, որոնք մարդկանց քաղաքական գիտակցության և վարքագծի վրա ունեն մանիպուլյատիվ ազդեցություններ:

Երրորդ՝ **«Սոցիալական մեդիայի ազդեցությունը քաղաքական փոխակերպումների և քաղաքացիակենտրոն կառավարման վրա»** ենթավերնագիրը անդրադարձել է Հայաստանում 2008 թ.-ից ի վեր սոցիալական մեդիայի և սոցիալական ցանցերի հանրային համախմբում իրականացնելու կարողությունը՝ քննության առնելով քաղաքացիական տարբեր նախաձեռնություններ, ցույցեր և քաղաքական այլ զարգացումներ՝ այդ թվում 2018 թ. Թավշյա հեղափոխությունը:

Երկրորդ գլուխը՝ **«Սոցիալական մեդիայում առկա բացասական գործոնների վտանգը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցության կայացման գործում»**, նվիրված է առաջատար տեխնոլոգիաների զարգացման հետ զուգահեռ ի հայտ եկող և արագորեն զարգացող թվային մարտահրավերների քննարկմանը, այն է՝ քաղաքական ապատեղեկատվության և քաղաքական ատելության խոսքը՝ քաղաքական հաղորդակցությունը վտանգելու և դրա արդյունավետությունը և թիրախայնությունը հարցականի տակ դնելու համատեքստում: Գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին՝ **«Առցանց քաղաքական ապատեղեկատվության և դավադրապաշտական տեսությունների հարցերի շուրջ»** վերնագիրը կրող ենթագլուխը համալիր աշխատանք է նվիրված սոցիալական մեդիայում դիտավորությամբ կեղծված կամ ոչ պրոֆեսիոնալ աշխատանքի հետևանքով գեներացված քաղաքական բնույթ կրող թյուր տեղեկատվություններին և լրատվություններին: Մասնավորապես, ենթագլուխը ներառում է քննարկում ապատեղեկատվության տարածման «վիրուսային մոդելի» գիտական հիմնավորման և ապատեղեկատվությունների ժամանակակից դասակարգումների ու տեսակների մասին: Որպես առանձին երևույթ քննության է առնվում «դավադրապաշտական տեսություն» հայեցակարգը՝ մեծ հնչեղություն և լայն տարածում ունեցող իրադարձությունների անպատեհ քաղաքականացման ու գիտականորեն անհիմն մեկնաբանման հիմքով: Այս դիտանկյունից աշխատանքում տեղ է գտել սոցիալական մեդիայում կորոնավիրուս համավարակի շուրջ միջազգային քննարկումները և դրանց բացասական հետևանքները հանրային տրամադրությունների և հասարակություն-պետություն հաղորդակցության վրա:

Երկրորդ՝ **«Առցանց քաղաքական ատելության խոսքի և պոպուլիզմի հարցերի շուրջ. ռիսկային հռետորաբանություն»** վերնագրով ենթագլխում ներկայացվում է սոցիալական մեդիայում հիմնախնդիր դարձած քաղաքական ռիսկային հռետորաբանությունը և քաղաքական ատելության խոսքը: Մասնավորապես, հիմնավորվել է քաղաքական բնույթի ատելության խոսքի

ազգային-պետական մասշտաբների վտանգները և մատնանշվել քաղաքական ցինիզմի, քաղաքական-հասարակական բևեռացման, գաղափարական անհանդուրժողականության և ապակայունացման տանող ճանապարհները: Սոցիալական մեդիայի համատեքստում քննարկման առարկա են դառնում «պոպուլիզմ մեդիայի կողմից» և «պոպուլիզմ մեդիայի միջոցով» եզրույթները՝ քննության առնելով «թվային պոպուլիզմը» որպես առանձին սոցիոմշակության երևույթ, և դրա ազդեցությունը ժողովրդավարության ու պետական կարգի նկատմամբ հասարակական անվստահության խորացման գործում: Ատենախոսության այս գլխի ամփոփման համար ներկայացվել է 2020 թ. անցկացված հարցման և թիրախային խմբերի հետ քննարկումների հավաքական արդյունքները:

Երրորդ գլուխը՝ **«Տեղեկատվական հասարակության զարգացումը՝ որպես Հայաստանում այլընտրանքային քաղաքական հաղորդակցության գրավական»** վերնագրով, ամփոփում է այն հնարավորությունները, որոնք ամրապնդում են սոցիալական մեդիա և քաղաքական հաղորդակցություն կապը և տալիս են իրատեսական հիմքեր զարգացնելու այլընտրանքային հաղորդակցության ուղիները՝ բարձրացնելով հասարակություն-պետություն անքակտելի և անհրաժեշտ երկխոսությունը ավելի արդիական և բարձրակարգ մակարդակի: Որպես նմանօրինակ ուղիներ դիտարկվում են Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման հնարավորությունները, թվային մասնակցության հայեցակարգի զարգացումը, և մեդիա ու թվային գրագիտության առարկայական գիտելիքի և հմտությունների սերտման անհրաժեշտությունը: Երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը նվիրված է **«Պետություն-հասարակություն հաղորդակցության կազմակերպումը էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման ու գործառնման միջոցով»** թեմայի քննարկմանը: Ենթագլխում տեղ է գտել Հայաստանում տեխնոլոգիաների ու սոցիալական մեդիայի զարգացմանը զուգահեռ թվային կառավարման կամ էլեկտրոնային կառավարման գործընթացի վերլուծություն, որտեղ, որպես ամենաառանցքային հիմնախնդիր դիտարկվում է ճգնաժամերի կառավարման հնարավորությունը պետություն-հասարակություն էլեկտրոնային հաղորդակցության կառուցողական վարման արդյունքում:

Երկրորդ ենթագլուխը՝ **«Թվային մասնակցությունը (միկրոակտիվիզմ)՝ որպես մասնակցային ժողովրդավարության կայացման ժամանակակից այլընտրանք»** վերնագրով, ներկայացնում է թվային տիրույթում հանրության կողմից քաղաքական մասնակցային իրավունքի իրացումը՝ որպես ժողովրդավարական զարգացման և մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման գրավական: Առողջ թվային մասնակցության կամ միկրոակտիվիզմի համատեքստում քննության է առնվում նաև ծույլ մասնակցային վարքը իր զանազան դրսևորումներով՝ «քլիքտիվիզմ», «հաքտիվիզմ» և այլն:

Եզրակացություններ և առաջարկներ: Ամփոփելով աշխատանքը և հիմնվելով նրանում սահմանված նպատակների և խնդիրների վրա, կարող ենք եզրակացնել,

որ սոցիալական մեդիայի մասնակցությամբ քաղաքական հաղորդակցությունը բազմամակարդակ և համապարփակ գործընթաց է՝ մեծաքանակ դերակատարներով և բազմավեկտոր փոխազդեցությամբ, ուղղահայաց և հորիզոնական կապերով, որոնք իրականացվում են տարբեր ուղիներով ու մակարդակներում՝ տեղեկատվության շրջանառման հիմքով:

Սոցիալական մեդիան ձևավորում է նոր տեղեկատվական իրականություն, որտեղ պետությունը կիսում է հանրային իշխանության մի շարք գործառույթներ, ինչն անհրաժեշտ է դարձնում քաղաքացիների հետ կառուցողական երկխոսություն իրականացնելու համար նոր մոտեցումների որոնումը: Միևնույն ժամանակ, քաղաքական հաղորդակցության ձևերն ու տեսակները ենթարկվում են վերափոխման: Ավանդական լրատվամիջոցները փոխարինվում են առցանց ռեսուրսներով, ինչը պահանջում է, որ պետական մարմինները դառնան ավելի «բաց» և առնվազն հրապարակայնորեն երկխոսության մեջ մտնեն սոցիալական մեդիայի դերակատարների հետ՝ հետադարձ կապի ուղիներով: Այդ գործընթացը գլոբալիզացիայի, ինֆորմատիզացիայի և հաղորդակցության նոր տեխնոլոգիաների զարգացման հետևանքով ենթարկվել է և ենթարկվում է համակարգային վերափոխման:

Սոցիալական մեդիայի զարգացման հետ քաղաքական հաղորդակցության գործընթացը փոխել է նաև իր բովանդակությունը, ձևն ու տեսակները՝ անսահմանափակ տարածելով իր ազդեցությունը, ընդլայնելով հաղորդակցության սահմանները իրական և վիրտուալ աշխարհում, վերաձևավորելով մարդկանց արժեքային համակարգերն ու գաղափարական դիրքերը: Մեծամասամբ, այս փոփոխությունները վրա են հասել նոր որակի սոցիալական տարածքների և ցանցային հասարակությունների ձևավորման արդյունքում, որի էության ըմբռնումը հնարավոր է նաև սիներգետիկ մոտեցման շրջանակներում:

Վերջին տարիներին համացանցի և սոցիալական ցանցերի մոբիլիզացիոն ներուժը դարձել է քաղաքական հետազոտության առարկա: Միևնույն ժամանակ, իշխանությունները և քաղաքական այլ ուժեր օգտագործում են առցանց ռեսուրսների ներուժն իրենց օգտին, օրինակ՝ ապաքաղաքականացնելու կամ քաղաքականացնելու հանրային տրամադրությունները, արգելափակելու ընդդիմադիր կամ իշխանական ռեսուրսները կամ, ընդհակառակը, իրականացնելու քաղաքական մոբիլիզացիա ընտրական շրջանում:

Չնայած ավանդաբար քաղաքացիների քաղաքական մոբիլիզացիան դիտվում էր որպես ուղղահայաց հաղորդակցություն իշխանությունների և հասարակության միջև, ներկայումս, շնորհիվ սոցիալական մեդիայի զարգացման, մենք տեսնում ենք, որ քաղաքացիների միավորման նախաձեռնությունը կարող է ունենալ անհատական ծագում, այսինքն՝ ցանցերում հաղորդակցությունը զարգանում է հորիզոնական և բխում է դերակատարներից, ովքեր հաճախ ներգրավված չեն քաղաքական համակարգում ոչ ինստիտուցիոնալ, կազմակերպչական կամ տեխնիկական մակարդակներում:

Սոցիալական մեդիան, որն այլևս ձեռք է բերել գլոբալ հարթություն, ազդում է մարդկանց կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Ժամանակակից տեխնոլոգիաները

և թվայնացված իրականությունը թույլ են տվել սոցիալական մեդիային դուրս գալ պարզապես հաղորդակցման միջոցների դաշտից: Այժմ այն հանդիսանում է ծառայությունների, նորությունների, ֆինանսական գործարքների կամ առևտրի միջնորդ և յուրօրինակ կամուրջ մարդկանց, պետությունների, կազմակերպությունների, մշակույթների և լեզվաընտանիքների միջև: Եվ սա լավագույն ցուցադրումն է նրա, որ թվային տիրույթում պարզապես փոխադարձ հաղորդակցությունների և սոցիալ-քաղաքական կյանքի մասնակցության միջև գոյություն ունեցող սահմանները մշուշոտ են և սահմանման ոչ ենթակա:

Սոցիալական մեդիան յուրաքանչյուր օգտատիրոջ թույլ է տալիս ստեղծել իր նորությունների բովանդակությունը՝ այդ կերպ խաղալով «քաղաքացի լրագրողի» դեր: Շատ դեպքերում տեղեկատվության սկզբնաղբյուրը բացահայտելը դառնում է խիստ մարտահրավերային, քանի որ այն գեներացվում է ոչ միայն մասնագիտական լրատվականների կողմից, այլ նաև անհատ օգտատերերի ու կամ հեղինակային էջերի միջոցով: Փաստացի, թվային տիրույթում յուրաքանչյուր ակտիվ գործոն՝ լինի այն մարդ, մարդկանց խումբ, թե ավտոմատացված համակարգ, ստեղծում և շրջանառում է մեծաքանակ լրագրողական բովանդակություն և օգտագործում նոր տեխնոլոգիական գործիքներ, որոնք կարող են օգտագործվել լրագրողների արտադրողականությունը օպտիմալացնելու համար: Սա ոչ միայն բանավեճ է առաջացրել լրագրողների և սիրողական բլոգերների քաղաքացիական-իրավական կարգավիճակի վերաբերյալ, այլ նաև բիզնես երկընտրանք է ստեղծել պրոֆեսիոնալ լրատվականների համար: Ակնհայտ է, որ ավանդական հասարակությունը վերածվում է տեղեկատվական հասարակության: Այս գործընթացը քաղաքագիտական առումով մշտական ուշադրություն և վերլուծություն է պահանջում: Միաժամանակ ակնհայտ է, որ քաղաքագիտության տեսակետից այն ակնհայտորեն բավականաչափ ուսումնասիրված չէ: Սա իր հերթին որոշում է քաղաքական հաղորդակցության զարգացման վրա սոցիալական մեդիայի ազդեցության տեսական և կիրառական ասպեկտների մշակման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա հրատապ խնդիր է դառնում քաղաքացիներին քաղաքական հաղորդակցության և քաղաքական ու պետական ինստիտուտների գործունեության մեջ արդյունավետ ու թիրախային ներգրավման հարցը: Մարդկանց քաղաքական մոբիլիզացիայի ամենահեռանկարային տեխնոլոգիան, այս տեսանկյունից, սոցիալական մեդիայի միջոցով հասարակական ակտիվությունն է:

Տեղեկատվական և հաղորդակցական տարածքի ուսումնասիրությունը և նրա դերը քաղաքական տարածության ընդլայնման և քաղաքական հաղորդակցության գործընթացի վերափոխման գործում թույլ տվեցին գալ հետևյալ եզրակացությունների.

- Սոցիալական մեդիան նշանակալի դեր է խաղում ՀՀ-ի դրական կամ բացասական իմիջի ձևավորման գործում, ուստի այն ներկայացնող տարբեր սուբյեկտների քաղաքական գործունեության ոլորտը հիմնական խնդիրն է սոցիալական մեդիայի համար իմիջ ձևավորելու տեսանկյունից:

- Սոցիալական մեդիայի զարգացման շնորհիվ Հայաստանը դարձել է համաշխարհային տեղեկատվական միջավայրի մի մասը: Այս առումով տեղեկատվական հասարակության և տեղեկատվական ու հեռահաղորդակցության նոր տեխնոլոգիաների զարգացումը դարձել է երկրի զարգացման կարևորագույն ռազմավարական խնդիրներից մեկը: Սրան պետք է ուղղված լինի պետության կողմից որդեգրած թվայնացման ուղու արդյունավետ և նպատակային վարումը և հենց պետության անմիջական աջակցությամբ թվային տեղեկատվական դաշտի զարգացումը և անվտանգ դառնալու հեռանկարի ապահովումը: Սրանից է բխում անհրաժեշտությունը Հայաստանում մեծ թափով և բազմակողմ ներգրավվածությամբ իրականացնել մեդիա և թվային գրագիտությանն ուղղված համալիր ծրագրեր, պայքարել ապատեղեկատվությունների և մանիպուլյատիվ բովանդակությունների դեմ: Բազմակողմ ներգրավվածությունը ենթադրում է պետություն, մասնավոր սեկտոր, մեդիա ոլորտ և քաղաքացիական հասարակություն սերտ փոխգործակցությունը՝ ի շահ հանրության և պետականության:
- Քաղաքական ոլորտում նոր տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից միտումը կարելի է համարել ժամանակակից քաղաքականության սոցիալական ցանցայնացում, որի արդյունքում քաղաքական գործընթացների զարգացումը պայմանավորված է ոչ միայն ավանդական լրատվամիջոցների, այլև տարբեր տեսակի օնլայն հարթակների, բլոգերի և ցանցային հեղինակությունների (ինֆլյուենսեր) գործառնմամբ: Այլևս պետք է հաշվի նստել նրա հետ, որ թվային տիրույթում քաղաքական առումով մարդկանց ինտեգրելու տեխնոլոգիաները ինտենսիվ տեմպերով զարգանում են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Սոցիալական մեդիան կրում է մարդկանց վարքը վերահսկելու նոր մեխանիզմներ, որոնք ձևավորում են հանրային տրամադրություններ, ձևավորում են օրակարգեր և ուղղորդում քննարկումներ: Այս թվային գործիքները լրատվության, հայտարարությունների, կոչերի, տեղեկատվական գրառումների, հարցումների, հրահանգների, մեկնաբանությունների, դիտումների, հավանումների, կիսումների, ուղիղ եթերների, տեսալսողական նյութերի տեսքով օգտագործվում են քաղաքական նպատակներով՝ ընդդիմության և իշխանության, ինչպես նաև այլ դերակատարների կողմից:
- Սոցիալական մեդիայի հիմնական ռիսկի գործոններն են լրատվական բովանդակության ֆորմալացումը, լրատվական բովանդակության մեջ տեղեկատվության պակասը և օգտատերերի կողմից արձագանքի բացակայությունը: Մյուս կողմից, կայունացնող գործոնները ուղղված են մեզանում քաղաքական ինստիտուտների զարգացման համար ավելի կայուն քաղաքական միջավայրի և պայմանների ստեղծմանը: Հայտնաբերված հիմնական կայունացնող գործոններն են քաղաքական գործիչների սոցիալական մեդիայի կառավարման սկզբունքների փոփոխությունները, քաղաքական գործիչների սոցիալական մեդիայի օգտատերերի հետ շփվելու

եղանակների փոփոխությունները, քաղաքական գործիչների գրառումների բովանդակության փոփոխությունները և այլն:

- ՀՀ քաղաքական համակարգի և դրա ինստիտուտների քաղաքական կայունությունն ու դիմակայանությունը կառավարության բոլոր մակարդակների համատեղ, համապարփակ ջանքերի արդյունք են՝ բարելավելու ինչպես սոցիալական մեդիայի գրառումների բովանդակության, այնպես էլ առցանց օգտատերերի հետ հաստատված հաղորդակցության որակը: Կարևոր է նշել, որ դիմադրողականության թուլացումը, մեծամասամբ հենց, հուսալի տեղեկատվության պակասի և կեղծ ու անորակ տեղեկատվության առատության պատճառով է: Այս իրավիճակում մենք կարծում ենք, որ սոցիալական մեդիայում առցանց հաղորդակցության ռազմավարությունների վերլուծության համար մեր կողմից առաջարկվող մոտեցումները թույլ են տալիս ոչ միայն բացահայտել առկա խնդիրները, այլև օգտագործել ստացված հետազոտությունների արդյունքները՝ որպես քաղաքական հաղորդակցության որակի բարելավման միջոց: Հաշվի առնելով մեր երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը, մոտ ապագայում ակնհայտորեն անհրաժեշտ կլինի քաղաքական գործիչների սոցիալական մեդիայի օգտահաշիվների կառավարման ֆորմալացված մոտեցումներից անցում կատարել՝ հօգուտ բարձրորակ բովանդակության և հետադարձ կապի արդյունավետ ուղիների զարգացմանը՝ ոչ միայն քաղաքական առաջնորդների և խորհրդարանի առանձին պատգամավորների, այլև քաղաքական այլ գործիչների կողմից:

Եզրափակելով պետք է ընդգծել, որ սոցիալական մեդիան չպետք է օգտագործվի որպես քաղաքական հաղորդակցության օբյեկտների վրա ազդելու գործիք, այլ որպես քաղաքացիների հետ վստահելի երկխոսություն կառուցելու հարթակ, որը երկարաժամկետ հեռանկարում կկանխի ինքնաբուխ բողոքի քաղաքական մոբիլիզացումը, որը կարող է հանգեցնել քաղաքական կայունության սպառնալիքի առաջացման: Ինչպես քաղաքացիների, այնպես էլ իշխանությունների կողմից պարտադիր արձագանքը կարող է գործիք դառնալ անցանկալի մոբիլիզացիան չեզոքացնելու համար, քանի որ այն սկզբնական փուլում կվերացնի հակասությունները և կնվազեցնի հնարավոր ճգնաժամների էսկալացիան: Այն ինչ պետք է վերոնշյալից խուսափելու համար հասարակություն-պետություն քաղաքական հաղորդակցման կայացման տեսանկյունից, կարելի է ամբողջացնել հետևյալ կերպ.

1. Սոցիալական մեդիայի «հիգիենիկ և հավասարակշռված» օգտագործում, այն է՝ օգտատիրոջ կողմից վիրտուալ տիրույթի առավելությունների և վտանգների ամբողջական գիտակցումը և դրա ծառայեցումը սեփական անձի զարգացման և հանրային շահը չբացառելու սկզբունքին:
2. Տեղեկատվական հասարակության կայուն զարգացում, որը ենթադրում է թվային և մեդիա գիտելիքներով հարուստ քաղաքացիներ, պետական ինստիտուտներ և ծառայողներ ու լիարժեք հասանելիություն էլեկտրոնային

կառավարման ոլորտի միջազգային փորձին՝ նորարարությունների որդեգրման և արդյունավետ գործարկման համար:

3. Ապատեղեկատվության և ռիսկային հռետորաբանության կամ ատելության խոսքի դեմ ուղղորդված պայքար՝ բացառելու համար թյուր տեղեկատվության հիմքով ներհասարակական խուճապը, իշխանական ինստիտուտների նկատմամբ անվստահության դրսևորումները, քաղաքական բևեռացումը և այլն:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Վիկտորյա Մելքոնյան,** «Սոցիալական մամուլը երիտասարդների շրջանում քաղաքական մասնակցության խթանման գործիք», Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, № 3 (30), 2019, էջ 28-39:
2. **Վիկտորյա Մելքոնյան,** «Սոցիալական ՀԼՄ-ում շրջանառվող ապատեղեկատվությունը՝ արդյունավետ հաղորդակցության հաստատման մարտահրավեր», Շիրակի պետական համալսարանի Գիտական տեղեկագրի N 2, Բ պրակ, https://doi.org/10.54151/27382559-2021.2b-199, 2021, էջ 199-207:
3. **Viktorya Melkonyan,** “Political Disinformation and Hate Speech on Facebook: The Attitude of Young Armenians Towards Modern Cyber Challenges”, Journal of Political Science: Bulletin of Yerevan University, Vol. 1, № 1, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.040, 2022, pp. 40-68:
4. **Վիկտորյա Մելքոնյան,** «Տեղեկատվական հասարակության փոխակերպման հիմնախնդիրները Հայաստանում», «Գիտական Արցախ» պարբերական, № 2 (13), 2022, էջ 112-121:
5. **Վիկտորյա Մելքոնյան,** «Էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկումը որպես հասարակություն-պետություն արդյունավետ հաղորդակցության կայացման գործիք», Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 14 (1 (40): 55-67. https://doi.org/10.46991/BYSU:D/2023.14.1.055, 2023, էջ 55-67:
6. **Anna Knyazyan, Hasmik Shapaghatyan, and Viktorya Melkonyan,** "Gender Dimensions of Verbal Aggression in Modern Media and Political Discourse: Cult of Violence or Playing with Aggressive Content?", Journal of Political Science: Bulletin of Yerevan University 4 (1 (10)): https://doi.org/10.46991/JOPS/2025.4.10.142:, 2025, pp. 141-163.

VIKTORYA MELKONYAN VARDGES

THE ROLE OF SOCIAL MEDIA IN THE CONTEXT OF TRANSFORMATION OF POLITICAL COMMUNICATIONS IN RA.

Dissertation under 23.00.01 "Theory of Political Science," aspiring to earn Ph.D. in Political Science. The defense will take place on February 4, 2026, at 14:00 at the Specialized Council 056 "Political Science and International Relations" of the HESC MoESCS RA, operating at Yerevan State University. Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian.

Abstract

The aim of this dissertation is to uncover the role and peculiarities of online communication strategies between social media users and political actors on behalf of insurance of civiliarchic dialogue and collaboration within society. The main goal of the work is to explore social media and political communication from the different angles by providing comprehensive argumentation for their interconnectedness and complementarity. The dissertation consists of introduction, three chapters, eight subchapters, conclusion and recommendations, bibliography ad appendices. 135 scientific articles and books, 11 legislative and sublegislative acts, 77 electronic sources served as preliminary materials for dissertation content. The total length of the dissertation is 151 pages.

The introduction outlines the relevance of the research topic, outlines and objectives of the dissertation, defines the object and subject of the study , as well as presents scientific novelty and potential directions for its theoretical and practical application.

The first chapter, titled "The theoretical and functional bases of social media" is dedicated to the theoretical and practical discussion of the concepts and the exposure of their direct and indirect interconnection. The Chapter covers the usage of social media tools for the political perspectives and the potential of social media in political mobilization processes.

The second chapter, titled "The negative factors of social media in the process of political communication in RA" is devoted to the analyses of digital challenges that come in accordance with the development of advanced technologies and developes quickly. The main stress is on the political disinformation and hate speech.

The third chapter, titled "The development of information society as an alternative political communication in Armenia" summarizes the opportunities that streghten social media and political communication links and gives realistic grounds for the development of alternative communication channels by raising the society-state indivisible and necessary conversation to the modern and higer level. The adaptation and development of electronic governance systems in Armenia, the development of digital participation concept, the urgency of learning media and digital literacy knowledge and skills are demonstrated as such channels in the chapter.

МЕЛКОНЯН ВИКТОРИЯ ВАРДГЕСОВНА

РОЛЬ СОЦИАЛЬНЫХ МЕДИА В УСЛОВИЯХ ТРАНСФОРМАЦИИ ПОЛИТИЧЕСКИХ КОММУНИКАЦИЙ В РА

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.01 “Теория политической науки”. Защита состоится 4 февраля 2026г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" КВОН МОНКС РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.

Резюме

Цель данной диссертации – раскрыть роль и особенности стратегий онлайн-коммуникации между пользователями социальных сетей и политическими акторами в целях обеспечения цивилизационно-архического диалога и сотрудничества в обществе. Основная цель работы – исследовать социальные сети и политическую коммуникацию с различных точек зрения, всесторонне обосновав их взаимосвязь и взаимодополняемость.

Диссертация состоит из введения, трёх глав, восьми подразделов, заключения и рекомендаций, библиографии и приложений. В качестве исходных материалов для диссертации использованы 135 научных статей и книг, 11 законодательных и подзаконных актов, 77 электронных источников. Общий объём диссертации составляет 151 страницы.

В введении излагается актуальность темы исследования, формулируются основные положения и задачи диссертации, определяются объект и предмет исследования, а также представлена научная новизна и потенциальные направления её теоретического и практического применения.

Первая глава, «Теоретические и функциональные основы социальных сетей», посвящена теоретическому и практическому обсуждению концепций и выявлению их прямой и косвенной взаимосвязи. В главе рассматривается использование инструментов социальных сетей в политических целях и потенциал социальных сетей в процессах политической мобилизации.

Вторая глава, «Негативные факторы социальных сетей в процессе политической коммуникации в РА», посвящена анализу цифровых вызовов, возникающих в связи со стремительным развитием передовых

технологий.Основное внимание уделяется политической дезинформации и языку вражды.

Третья глава, «Развитие информационного общества как альтернативного инструмента политической коммуникации в Армении», обобщает возможности укрепления связей социальных сетей и политической коммуникации и дает реальные основания для развития альтернативных каналов коммуникации, поднимая неделимый и необходимый диалог между обществом и государством на современный и более высокий уровень. В качестве таких каналов в главе рассматриваются адаптация и развитие систем электронного управления в Армении, развитие концепции цифрового участия, актуальность освоения знаний и навыков в области медиа и цифровой грамотности.